կրօնաւորն։ Զծերսն 'ի բանս մատնէին և զերիտասարդս 'ի գանս և 'ի կալանս և յաքսորս իսկ։ զվարդապետս հալածէին՝ զի մի՛ քարոզեսցեն զճշմարտութիւն Բանին կենաց։ իսկ եթէ համարձակէր ոք հակառակ նոցին բան ինչ խօսել, գանակոծ և վատահամբաւ հալածէին զնա։ Եկն 'ի սմին ժամանակի 'ի Կոստանդինուպոլիս Յովհաննէս վարդապետ Բաղիշեցի՝ միաբան Ս. Կարապետի՝ որ 'ի Տարոն, 'ի ժողովել զողորմութիւն վասն նորոգութեան վանաց, որոյ առաջնորդ էր Գրիգոր վարդապետ Ամրոլցի, որպէս գրի 'ի մեծ և 'ի փոքր կնիքս նորին, կամ Բաղիշեցի։ Եւ երկոքին սոքա Գրիգոր եւ Յովհաննէս էին աշակերտք Վարդանայ վարդապետի՝ առաջնորդի Վանաց Ամրորդւոյն՝ որ 'ի Բաղէշ, յորմէ երկոքին եւս կոչեցան Բաղիշեցի։

Եւ զի սա ինքն Յովհաննէս վարդապետ ունէր պարկեշտ վարս, և խոհական միտս և առատութիւն բանից 'ի քարոզս, Պատրիարքն Կոստանդինուպոլսոյ Սահակ վարդապետ՝ սիրով ընկալաւ զնա։

Տեսեալ և մեծամեծացն Հայոց՝ խորհուրդ արարին 'ի միջի իւրեանց, առաքել զայնպիսի այր առաքինի՝ որ զօրաւոր է 'ի բանս եւ 'ի գործս, յԵրուսաղէմ։ ճար առնել Աթոռոյն Ս. Յակոբայ՝, եւ հնարս գտանել ազատութեան 'ի պարտուց։ Ասա միակամ հաւանութեամբ ընտրեցին զնա Տեղակալ Երուսաղէմի եւ Փոխանորդ Պատրիարքի, եւ առաքեցին անդր, որպէս և ինքն ասէ։ հրաւիրմամբ և ստիպմամբ աստուածասէր ժողովրդոց եւ յորդորմամբ Տեառն Իսահակայ Պատրիարքի գահին Ս. Սաղիմայ, հարկեցաք տանել զողորմութիւն հաւատացելոցն 'ի Ս. Երուսաղէմ, և ծառայել Աստուածակոխ Տեղեացն։ Ցղեցին ընդ նմա և զիսրայէլ վարդապետ, որ կոչեցաւն Պօղոս, իբր գործակից նմա։ Իբրեւ եհաս Յովհաննէս վարդապետ յԵրուսաղէմ, և ետես զաղետալի վիճակ վանաց և եկեղեցւոյն, որպէս ինքն ասէ։ այնպէս հարին ագահութեան ախտիւ, մինչ չթողուլ 'ի նմա մասն առողջութեան։ Եւ ջանաց ամենայն զօրութեամբ ազատել զայն 'ի թշուառութեանց անտի։ Ազատեաց զմին 'ի վանօրէից 'ի վաճառելոյ, զոր եդեալ էին 'ի դրաւի, և զկանթեղս Գերեզմանին Քրիստոսի՝ 'ի Լատինաց, և զպարտէզն Ս. Հրեշտակապե-